

Գնահատող:

Լիլիթ Յովհաննիսյան

Հաշվետվության ստացման օրը: 6 օգոստոս, 2018թ. (Mon, Aug 6, 2018 at 3:01 PM)

Կարծիքի տրամադրման օրը: 14 օգոստոսի, 2018թ.

Ձեռնարկող: <<ԷԿՈ ՖՐՈՒԹ>> ՍՊԸ

Ծրագրի անվանում: ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՕԺԱՆԴԱԿ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության վայր: ՀՀ Տավուշի մարզ Աչաջուր համայնք

Կատեգորիա: Նախնական գնահատման հայտ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազդեցության գնահատման հիմնական փուլ

1. Բացակայում է նախատեսվող գործունեության **լիարժեք** բնութագիրը (արտադրական հզորություններ, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ), ինչպես նաև նախատեսվող գործունեության ենթակա տարածքի ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը: (Կարևոր է հարակից տարածք, իսկ տարածաշրջանը երկրորդական է: Մասնավորապես, տեղեկություն տրամադրել ջրի աղբյուրների և սելավատարների հեռավորությունը ծրագրի վայրից, մոտեցման մեթոդները և այլն):
2. Բացակայում է իրադրության սխեմա, որտեղ պայմանական նշաններով նշագրված լինի գործունեության ենթակա տարածքը տեղադիրքը և հեռավորությունը մոտակա գոյություն ունեցող օբյեկտներից, ենթակառուցվածքներից, բնակելի տարածքներից, հուշարձաններից և այլն :
3. Նախատեսվող գործունեության բնութագիրը բաժնում ավելացնել **սպառիչ** տեղեկատվություն՝ նախատեսվող աշխատանքների տեսակների և ծավալների, մոտեցնող ավտոճանապարհների, ինժեներական լուծումների (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրամատակարարում և այլն) և օգտագործվող բնառեսուրսների վերաբերյալ: Մասնավորապես, նախ ներկայացնել առկա ելակետային վիճակը, ապա նախատեսած անհրաժեշտ ծավալները, և սպասվելիք գործողությունները, որոնց շնորհիվ ջերմոցին անհրաժեշտ կարիքները կբավարարվեն:
4. Տրամադրել **սպառիչ** տեղեկատվություն՝
 - խմելու և արտադրական նպատակներով ջրօգտագործում, ջրաղբյուր, համառոտ քանակական հաշվարկներ, հաշվի առնելով աշխատողների թիվը, արտադրական նպատակները, ջրցանը, ոռոգումը և այլն,

- ջրահեռացում՝ ներկայացնելով աշխատողների կենցաղային կեղտաջրերի և արտադրական հոսքաջրերի քանակական համառոտ հաշվարկներ, հեռացման լուծումներ, անջրթափանց հորի, ծավալ, հզորություն և այլ բնութագրեր:

5. Ծրագրի վայրը գյուղատնտեսական նշանակության վարելահող է, անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն հողատեսքի նշանակության փոփոխության պլանների վերաբերյալ կամ առկայության դեպքում փաստաթղթերը:
6. Տրամադրել տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ:
7. Տրամադրել աշխատանքային նախագիծը (հաշվետվության մեջ հղում է կատարված, սակայն նախագիծը տրամադրված չէ):
8. Ջեռուցման և կլիմա – կոնտրոլ համակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ: Ներկայացնել առնվազն ևս երկու ավտերնատիվ ջերմոցային համալիրների ջեռուցման համակարգեր՝ հիմնավորելով որ ընտրվածն առավել արդյունավետն է ՕԳԳ-ի կտրվածքով:
9. «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»-ը աղյուսակը անհրաժեշտ է համալրել նախորդ բաժնի (բաժին 3) տեքստային տեղեկատվությամբ տրամադրված մեղմացնող միջոցառումներով՝ լրամշակելով հողային աշխատանքների և հողային ռեսուրսների պահպանմանն ուղղված քայլերի, հողաբուսաշերտի պահպանությունը /ծավալը, պահպանման վայրը, փոխհատուցման միջոցառումները և նախատեսվող գումարները/ կանաչապատման և բարեկարգման միջոցառումների, նյութերի տեղափոխման, ճանապարհների/մոտեցման ուղիների կառուցման, շին.հրապարակի կազմակերպման վերաբերյալ և այլ նմանատիպ անհրաժեշտ տեղեկատվությամբ: Միաժամանակ մեղմացնող միջոցառումների ծրագրում՝ աղյուսակում, ընդգրկել նոր սյունակներ «Իրականացման ժամանակացույց»-ի, «Պատասխանատու մարմիններ»-ի և «Մեղմացնող միջոցառումների ծախսեր»-ի վերաբերյալ: Ցանկալի է այդ աղյուսակը տրամադրել և՛ Շինարարության փուլի, և՛ Շահագործման փուլի համար:
10. «ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ»-ում նշել բնապահպանական նշանակության գործողությունների մոնիթորինգը ևս և՛ Շինարարության փուլի, և՛ Շահագործման փուլի: Համապատասխանեցնել (սինխրոնացնել) նախորդ աղյուսակի՝ բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագրի հետ:
11. Հաշվետվությունը ենթարկել խմբագրման և սրբագրման, այն տեղեկատվությունը, որը չի վերաբերվում կոնկրետ ջերմոցի ծրագրին հեռացնել: